ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2021 թվականի N 298-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ»,«ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ», «ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ», «ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ, ՎԵՑ, ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ և ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ», «ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ (LSFINANCE) ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ» և « ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (LSREP) ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 93-Լ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 12-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով և 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հաշվեքննիչ պալատը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 93-Լ որոշման № 4 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1. Դադարեցնել 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերի գործողությունը:
2. 12-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի 1-ին մասում հաշվեքննության օբյեկտները սահմանվում են՝ հաշվի առնելով պետական մարմինների՝ տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի նախագծով նախատեսված հատկացումների ծավալները՝ ըստ դրանց նվազման կարգի, և համաձայն 4-րդ բաժնում ներկայացված մեթոդաբանության, ինչպես նաև այն պայմանով, որ հաշվեքննության օբյեկտների թիվը պետք է փոքր չլինի Հաշվեքննիչ պալատի կանոնադրության 28-րդ մասի 1-ին կետով սահմանված հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների ընդհանուր թվից: Ընդ որում՝ հաշվեքննության օբյեկտների ցանկում պարտադիր ներառվում է պետական բյուջեի միջոցների հավաքագրման տեսանկյունից ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող մարմինը»:

3. 30-րդ կետում «Հաշվեքննության փաստաթղթավորման ուղեցույցով» բառերից հետո լրացնել «Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացության նախագծի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի պատրաստման ուղեցույցով» բառերը:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ